ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 21-ի N 3 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծի

Ներկայացված որոշման նախագծի ընդունումը բխում է Նաիրի համայնքի 2022 թվականի մարտի 10-ին կայացած ավագանու նիստում Նաիրի համայնքի ավագաիների առաջարկից, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջից, համաձայն որի համայնքի ղեկավարը համայնքի ավագնուն է ներկայացնում 2022 թվականի հունվարի 21-ի N 3 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 21-ի N 3 որոշման մեջ փոփոխություններ կատարելու կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Նաիրի համայնքի 2022 թվականի բյուջեի Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 21-ի N 3 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման ընդունումը համայնքի 2022 թվականի բյուջեում ենթադրում է ծախսերի ավելացում 38100.4 հազար դրամով: